Ավստրալիայի Մաքուորի համալսարանի ցեղասպանության համեմատական հետազոտությունների կենտրոնի «Լրատվական տեղեկագիր» (անգլերեն)
(Դեկտեմբեր 1994 - հունվար 1995)

Տեղեկագրի նյութերից հայտնի է դառնում, որ կենտրոնը հիմնվել է 1993 թվականին, պրոֆ. Քոլին Թաթզի նախաձեռնությամբ, որը Ավստրալիայում ցեղասպանության հարցերով զբաղվող ամենանշանավոր գիտնականներից է: Կենտրոնը զբաղվում է բոլոր ցեղասպանությունների ուսումնասիրությամբ: «Պատասխան պատերազմի հանցագործներին» պրոֆ. Ռ.Թայդիմենի հոդվածում նշվում է, որ ցեղասպանության կենտրոնում հավաքագրվել են բազմաթիվ նյութեր երկրորդ աշխարհամարտի ժամանակ ֆաշիստների կողմից հրեաների ջարդերի վերաբերյալ: Կենտրոնի աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ունեցել հակասեմիտիզմին նվիրված միջազգային գիտաժողովներին: Համալսարանի 12 ուսանողներ Իսրայելում մասնակցել են «Ողջակիզման և հակասեմիտիզմի ուսուցում» թեմայով սեմինարին: Կենտրոնը զբաղվում է նաև Ռուանդայում ու նախկին Հարավսլավիայի տարածքում տեղի ունեցած ցեղասպանության դրսևորումների հետազոտությամբ:

«Եթե մենք չհիշատակենք այդ հանցագործությունները, ապա կվիրավորենք ոչ միայն զոհերի հիշատակը և ողջերի զգացմունքները, այլև կնպաստենք այն հանգամանքին, որ նման դեպքեր պատահեն ապագայում»-, ասված է տեղեկագրում:

Կենտրոնը կազմակերպել է ցեղասպանության մասին դասընթաց, ուր ընդգրկված են 60-ից ավելի ուսանողներ: Այն հավաքագրում է ցեղասպանության վե-

ռաբերյալ նյութեր, տեսաժապավեններ, մատենագիտական փաստաթղթեր, ստեղծում համակարգչային մի ծրագիր, որը հնարավորություն կտա ծանոթանալ ցանկացած փաստաթղթի հետ: Կենտրոնն ունի իր գրադարանը, որտեղ տեղ են գտել նաև պրոֆ. Վահագն Տատրյանի մի շարք գրքեր ու հոդվածներ: Տեղեկագիրը հաղորդում է այն մասին, որ հետազոտությունների կենտրոնը ունի իր հայկական բաժանմունքը, որի նպատակն է հավաքագրել Հայոց ցեղասպանությանը, հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, լեզվին, ինչպես նաև ժամանակակից հարցերին վերաբերող նյութերն ու փաստաթղթերը, աջակցել դրանց մշակմանը և հրատարակմանը: Հայկական բաժանմունքում պահպանվող Հայոց ցեղասպանության հետ կապված փաստաթղթերի հավաքածուն ամենախոշորն է Ավստրալիայում:

Հայերի ցեղասպանության ժխտման առթիվ լրատվական տեղեկագրում ասված է. «... 1939թ. Հիտլերը հայտարարել է. «Ո՞վ է այսօր հիշում հայերի բնաջնջման մասին...» դրանով հաստատվում է երկու պատմական փաստ՝ հայերի ցեղասպանության իրողությունը և այն մոռացության տալը»:

Ավստրալիայի ցեղասպանության հետազոտության կենտրոնի հայկական բաժանմունքի տնօրինությունը դիմել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին՝ կապեր հաստատելու և համապատասխան ինֆորմացիայի փոխանակման հնարավորությունների հարցով:

Մաքուորի համալսարանի ցեղասպանության համեմատական հետազոտությունների կենտրոնի «Լրատվական տեղեկագրի» 1995թ. մարտ-ապրիլ ամիսների համարում զետեղված է Արմեն Կաքավյանի հոդվածը «Ազգայնականություն, ցեղասպանություն և երիտթուրքերի շարժումը» վերնագրով: 1907թ. Սոլոնիկում հիմնադրվեց երիտթուրքական «Առաջադիմություն և միություն» կուսակցությունը և հռչակեցին «հավասարների կայսրություն» ստեղծելու իրենց գաղափարը: Մեկ տարի հետո, երբ տեղի ունեցած հեղաշրջման հետևանքով իշխանության գլուխ անցան երիտթուրքերը, Թուրքիայի ազգային փոքրամասնությունները հույս ունեին ազատվել ազգային ճնշումներից և հալածանքներից: Սակայն, ինչպես գտնում է հեղինակը, 1908-1914թթ. ժամանակաշրջանում երկրի նոր կառավարողների հայացքները, բախվելով կայսրության ներքին ու արտաքին պահանջներին, աստիճանաբար

ամարձան ազգայնամոլական: Գրող Զիա Գյոք Ալպը կոչ արեց «վերա-ազգառնալ», կայսրությունը վերածել բացառապես թուրքական ազգի՝ այլ ազգիների բռնի ձուլման միջոցով: Դրան պետք է հաջորդեր պանթուրքական պետության ստեղծումը՝ տարածվելով Ստամբուլից մինչև Մոնղոլիա:

Երիտթուրքերի գաղափարախոսությունը 1911թ. հայտարարում էր. «Թուրքերի երկիրը Թուրքիան չէ, ոչ էլ Թուրքեստանը, նրանց երկիրը պայնարձակ և հավերժական հողն է Թուրանը»: Հոդվածագրի կարծիքով՝ 1915թ. հայերի ցեղասպանությունը հենց այդ ռազմավարության մի մասն էր կազմում: Երիտթուրքերի կարծիքով ազգային-հեղափոխական նպատակները պահանջում էին հեղափոխական ձեռնարկումներ: Երիտթուրքերը ղեկավարվում էին պանթուրքիզմի գաղափարախոսությամբ, իսկ հայերը երիտթուրքերի պլանների համար խոչընդոտ էին հանդիսանում:

ԱՌՆՈ ՀԱՄԵԼԵՆ, ԺԱՆ ՄԻՇԵԼ ԲՐՈՆ, Վերականգնված հիշողություն. Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 1995, 254 էջ (Ֆրանս. թարգմ.՝ Գ.Զանիկյանի)

Գրքի հեղինակները՝ ֆրանսիացի հրապարակագիրներ Առնո Համելենն ու Ժան-Միշել Բրոնը արյունակցական որևէ կապ չունեն հայերի հետ և մինչ այս գրքի գրելուն ձեռնամուխ լինելը, նույնիսկ ծանոթ չեն եղել հայոց պատմությանը: Նրանց հետաքրքրությունը հայ ժողովրդի հանդեպ բորբոքել են 1970-ական թվականներից սկիզբ առած հայկական գաղտնի բանակների ահաբեկչական գործողությունները: Զբաղվարվելով պատմական վավերաթղթերով, նրանք եղել են աշխարհի գրեթե բոլոր հայահոծ գաղթօջախներում, բազում հանդիպումներ ունեցել, զրուցել թուրք պաշտոնյաների և հայ մահապարտների հետ և, ի վեր-